

ՊԱՏՄԱԿՈՆ ՆԿԱՏՄՈՒՆՔ

ԿԱԾ ԳՐՈՒԹԵԱՆ ԵԽ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Անոջ ունեցած զրութիւն այս կամ այն ժամանակում, այս կամ այն երկրում կտպայմանաւորութիւնը իսկ հասարակութեան մտաւոր և բարոյական զրութեամբ։ Հին հեթանոս աշխարհի քաղաքակրթութիւնը զանազան մասերում անհամապատասխան էր ձշմարիտ հասկացողութիւններին մարդկային արժանաւորութեան մասին։ ուստի և կնոջ զրութիւնը կռապաշտական աշխարհում չը կարող գոհացուցիչ լինել։ Ի՞ոնակալութիւնն և եսականութիւնը, բարոյազուրկ մեղկութիւնն և ուրիշ երեսոյթներն, որոնք սեպհական էին հեթանոս աշխարհին, նաև նորա մշակուած զարգացման վերին աստիճանների վերայ, իւրեանց բոլոր զօրութեամբ կներգործեին կնոջ զրութեան և կրթութեան վերայ։ Վմենուրեք, ուր կիշենէր ֆիլիքական բիրտ ոյժը, կնոջը դժուարին էր մաքառել այր մարդի հետ, իսկ ուր ախրող էր հանդիսանում բարքի ապականութիւն, նա բոլորվին կկորցնէր իւր արժանաւորութիւնն և յարգուելու որ և իցէ իրաւունք։

Ա պյունի վիճակում, մարդկային զարգացման ստորագոյն աստիճանների վերայ, ուր ինքն կրօնը հիմնուած էր բնութեան ֆիլիքական ահացուցիչ զօրութիւններից զգացած ստրկացնող երկիւղի վերայ, և ուր հասարակական կազմակերպութիւնը կյենաւ զօրեղի իրաւունքի վերայ, կինը կիատարէ ամենատխուր զեր, նա չունի այդ հիմնական իրաւունքը, զօրեղի իրաւունքը, և աղամարդը կվարուի նորա հետ

իրեկ իրի հետ։ Ի այց քանի զնալով հասարակութիւնը զուրս կդայ պարզ կնեղանական կեանքի վիճակից, նորա հետ ևս կախն զարգանալ և ընտանեկան շահներն ու սերը. կինը այն ժամանակ կսահնայ վեհազգոյն նշանակութիւն իրեկ մայր և տան տիկին։ Տղամարդը կսկսէ տածել յարգանք դէպի նա. նորա զրութիւնն աւելի ապահովուած կինի։ Այս մենք կաեն նննը, օրինակ, ցեղական կամ նահապետական կեանքի մէջ։ Այս տեղ ընտանիքի անդամները միացած են իրանց զիսի հետ ոչ միայն դէպի նա իրեկ դէպի սմենազօրեղն ունեցած արտաքին, անպայման հնազանդութեան պարտաւորութիւններովն, այլ և այն անկեղծ մասերմութեամբ, որ տեղի չէ տալի կոսպիտ բունութիւնների։ Այսպիսի յարաբերութիւնների պատկերը բնութեան անմիջական ազդեցութեան ներքոյ կներկայացնէ մեղ հոմերոսը. նորա մօտ մեծ է կնոջ նշանակութիւնը. կինը կերեի ներգործող ոչ միայն ընտանիքում իրեկ մայր և սնուցիչ իւր զաւակների, ոչ միայն իրեկ տանտիկին տեսային բարեյարդարութեան վերայ հրակող, այլ կարտայայտէ արդէն իւր ազդեցութիւնն և հասարակական կեանքի մէջ, տալով իւր կարծիքն, քաջալերելով արդարացիներին և պահպանելով նոցանում անյոզգողդ հոգի։ Վհնելօպի, Ասդրօմոքոցի, Հեղինեի, Ալիսէմնէստրայի և ուրիշների հոմերեան տիպերը լի են բարոյական բարձր արժանաւորութեամբ. նոյնպէս և Հոմերեան աստուածուհիների բնաւորութեան և զօրծունեութեան մէջ կարտափայլէ կանացի տարրի արգոյ սըշանակութիւնը։ Այս տեսակեալից կարե-

լի է նայել կնոջ նշանակութեան վերայ և հին գերմանական և սլաւոն ցեղերի մէջ : Հռովմէական մատենազբերը իրբե զաս իրանց անբարոյական հայրենակից ներին նկարագրելով Գերմանացիների պարզ և մաքուր բարբը, զովասանքով կիսօսն և զերմանացի կնոջ վերայ : Եյս պէս Տացիտի վկայելով Գերմանացիներ կնայեին կնոջ վերայ իրբե մի նուիրական էակի, և այս պատճառով կնոջ կարծիքն ու խորհուրդը մեծ մասամբ ուներ կարեւոր նշանակութիւնը :

Մեր ժողովրդական աւանդութիւնների մէջ կինը շատ անդամ կերեի նախազուշակ աղջեկ, կախարդ :

Եյս ամէնն շատ թէ սակաւ ցոյց կտայ այն, թէ կանացի տարբը երբեմն ինչ նշանակութիւն կարող է ստանալ նախանի հասարակութեան մէջ, որ կգանուի զարգացման բարեյաջող պայմաններում, Շայց որովհետեւ նախնի հասարակութիւնները մեծ մասամբ հարկադրուած էին մշտատե պատերազմ մզել բնութեան և զրացիների գէմ, ուստի Ֆիզեքական ոյժն կերեի այդ դէպքում կեանքի զիստոր շարժիք. և կանացի տարբը կամ ինքըն իրան սլիտի երկրորդական տեղ բնւէ, կամ երեի նոյնպէս արտաքին զօրութեան, նորան շառւած յատկութիւններով : Գերմանացի կանայք կաշխատեին յետ չմնալ տղամարդիկներից քաջութեան և պատերազմականութեան մէջ, ըստ որում այդ յատկութիւնները առանձնապէս յարգելի էին և անհրաժեշտ կհամարուեին բընութեան և զրացիների հետ շարունակարար տուած կռուի պատճառով : Գերմանուհիները տանելով արշաւանքների

բոլոր ծանրութիւնները, պատերազմի բոլոր զարհութանքներն իրանց ամուսինների հետ միասին, շատ անդամ կղրդուեին կշարժեին վերջններին դէպի կոխ և դէպքն եկած ժամանակ իրանք ևս կսկսեին իրբե էգ վազրները : Կոքա կատաղութեամբ կմարմէին ոչ միայն զերիներին, այլ և իրաններին որոնք անպատուաբար կփախչէին պատերազմի զաշտից :

Գին դնելով միմիայն ազատ կեանքին, նոքա մանուկներին կզարկեին գետնով, կպաշտպանուեին ինչով որ կպատահէր, մինչեւ անդամ իրանց սեպհական մանուկներով, կընկնեին վիրաւորուած և սրաբեկ, կիսեղզուեին իրանց սեպհական երկար մազերով, որ կենդանի չընկնեն թըշնամիների ձեռքը : Գերմանուհիների նման և Ալաւոն կանայք կաշխատեին արտայայտել իրանց Փիզեքական ոյժը դիւցաղնական շրջանում • այսպէս երբ որ Ավետառուազը կպատերազմէր Շուլդարիայում, շատ կանայք կվուուեին իրանց մարզիկների հետ հաւասար : Եյդ ժամանակամիջոցի ինչպէս Գերմանացիների, նոյնպէս և Ալաւոնների մօտ սէր առանց Փիզեքական ոյժի նշանակութիւն չունի . հարսը շատ անդամ պսակ մանելուց յառաջ պիտի ցոյց տար իւր ոյժը փեսայի հետ ըմբշամարտելով : *) Անոջ այսպիսի անկանոն

(*) Զէ կարելի ցաւել, որ մեզանում գետ ոչ ոք յանձն չառաւ հետազոտել զիւցաբանական և նին պատմական շրջանների հայ կնոջ զրութիւնը: Ցիրաւի առաջին անդամ պ. Ա.դ. Երիցեան տուեց մետ ուսւ լեզուով այդ նիւթին վիրաբերած մի փոքրիկ զրոյկ “Историческое положение современной Армянки”, рայց այդ աշխատութիւնը միանդամայն անհամապատասխան է իւր վեցայ կրած վիրնագրին: Սա-

զարգացումն չհամապատասխանելով նորա արժանաւորութեանն, անցուսալի էր նորա բարօրութեան համար: Խւր ֆիզիքական ոյժը տղամարդի հետ ըմբշամարտելում արտայայտելու ձգտումն պէտքէ տար նորան կեղծ զրութիւն և վախճան կառնու ոչ յօգուտ նորա: “Նորա մըցումն տղամարդի հետ այդ մասում անկարելի կերեի: Հսկայութեան և հերոսութեան

կայն այդ տեղ պակասութիւնը բազմաշխատ հեղինակի կողմից չէր, որ մի այդպիսի ժանր ինդիր ուսումնասիրելու համար կարօտ էր աղքարների: Հայ գրականութեանն ամենամեծ ծառայութիւն արած կինէին այն պարոններն, որոնք յանմն առնէին ժողովել իննամով եւ զգուշութեամբ ժողովրդական զրոյցներն (հերիաթներն), աւանդութիւններն եւ երգերն, որոնց շատերը ամենահին ժամանակներից մինչեւ այսօր անկորուստ պահուելով աւանդապահ ու ամրկների մէջ, պարզ ցոյց կտան Հայ կնոջ զրութիւնը ընտանեկան եւ հասարակական կեանքի մէջ վերոյիշեալ շրջաններում: Այս մասում երսխտագիտութեան արժանի է Հ. Գ. Արուանձտեանի «Գրոց ու Բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհերի զուռ» պատուական աշխատութիւնը, որի մէջ կտեսնենք, որ Հայ կինն իւր փեսացուին մեռքը տալուց յառաջ դիւցազնական քաջութեան փորձեր անել կտայ: Սատունիդի Դաւիթի ամուսնութեան ինդրած հերոսունին—Խանդուդ Խանումը բաւական չէ համարում նորան ուղարկել հանգունատիա Դիւցազունների—Շըրլան Խորասական, Լոռայ Հըմկայ Փահլիվոներու զինները բերելու, այլիւ երբ Դաւիթ «օր մը յար իրիկուն» կուռելով կտպանէ այդ դիւցազուններին—որոնց մէկի—Շըրլանի «վերին ունք Էնդան էր կախուի, որ եկեր էր հասե վըր սրտին ու չանգալով կտպեր էր ու զարկե ետեւանց վըր պառեկին, ընմէկէլ Լոռայ Հըմկայ Փահլիվանի ներքեւի մուռն զկետին կաւէր ու կերթէր» եւ երբ զիններն առած յետ կդառնային կտեսնէին «որ մէկ ծրաւոր մէջ երկինք մէջ գետին խաւիկ՝ գայ ընդիէն» կանչեց վըր Դաւիթ: հը, զըզի բո վախտին հազըր պահէ:

կատարելատինը այսու ամենայնիւ կերւի ի դէմա տղամարդի և կնոջ: Դերմանացինների սկզբնական դրութեան մէջ կարտայայտուին կնոջ տառապակրութեան սկզբունք, որի հաստատութիւն կարող է լինել օրինակ այն փաստն, որ շատ գերմանացի ցեղեր մեռած մարդիկների հետ մահի կտային և նոցա կանանցը: Համարելով նոցա իբրև ամուսինների սեպհականութիւն:

Պետական և քաղաքական սկզբունքների զարդանարու հետ միասին կնոջ ըստրկական վիճակն աւելի և աւելի կծան-

• • • պառեկի (քամակի) Թարաքն առաւ Դաւիթից, կուրք մի զարկեց: Դաւիթ թամբ դարտըկեց, կուրքն առաւ ծիռ զանգուն տարաւ զետին: Դաւիթ մէկ լէ շիտկաւ վըր թամբին, զկուրզ տարաւ որ զարկէր զիսուն ըդի գմաւ, ծամեր թափաւ, առջեւու: Դաւիթ ճանչցաւ որ Խանդուդ Խանումն էր, ուր խորլս փոխեր էր եկի Դաւիթի առէդ . . . առան զուրար, զուրանց պսակն էրեցին, եօթն օր եօթն զիշեր հարսանիք էր »: Այսպէս են նաև այն զրոյցներն, որոնցում հարսնացուններն իրանց մեռք խնդրոնին առաջարկուեմ են զնալ թերել «անմահական ջուր» անմահական ինձոք, եւլն իսկ այդպիսի յանձնարարութիւնների կատարումն ամեն հասարակ մանկանացու չէր կարող յանմն առնել, ըստ որում պէտք էր մինչեւ տեղը հասնելը հանանիի անպատմելի վտանգների ենթարկուէր: Նորան կրապատէր ամեն մի քայլում մահ: մի տնել ինձոքին պահապան էր «քառասուն զինանի դեւ: մի տեղ անքուն հնկող պահապան զօրք: մի ուրիշ տեղ կախարդական անմատչելի պարիսպ: որոնց ներսը «ոչ զուշն իրա թեւովն մտած կիներ, ոչ օճն իրա պորտով» պարիսպներ, որոնց շատ բրդերը կառուցած կինէին այդպիսի նպատակով ուղարկուած եւ այնա սպանուած կտրիմների զիններից: Ցաջողութեանը վերադարձնը իսկոյն կտանար քաջութիւնը ինդրով ազգկան ճեղքը:

րանայ: Տղամարդը գործելով զլխաւորապէս արտաքին զօրութեան ասպարէզում; ընտանեկան կեանքի մէջ չէ զափւում որ և իցէ բարոյական պարտաւորութիւններով և կներկայացնէ զօրեղե իրաւունքները: Աորա բռնակալութիւնը կփոխանակէ, առաջին նահապետական յարաբերութիւններին և սորա հետ միասին, իրեւ անիուսափելի հետեւանք յառաջ կզայ կնոջ բարոյական անկումն, որ կարող է հասնել սարսափելի ընդարձակութեան, ինչպէս կտեսնենք այդ, օրինակ, ասիական արևելքում: Երեւելքում կնոջ բաղդր և այժմ ևս կմնայ այն, ինչ որ էր Վրիստոսի ծնունդից մի քանի դար յառաջ: Կորածին աղջեկներին սպանելն կամ իրաց ընկենուն, նոցա կրթութեան մասին բոլորովին անփոյթ առնելն, կանանցը վաճառափողում վաճառելն կանանց ների (հարէմների) համար. նոցա փակել — արգելելն և ծառ այացնելն բոլորին, հօրից և մարդից սկսած մինչեւ որդիքներին և եղբայրներին, և ամենահետաւոր ազգականներին — տղամարդիկներին, նոցա բազմամակին (ազօլիգամական) զրութեան սարսափելի ծնշողութիւնը, թշուառ այրիների մեռած մարդիկների հետ միասին խարոյկի վերայ այրելն են, — այս ամենն այնպիսի փաստեր են, որոնց մասին շատ է զըրուել և որոնց նկարազրին անձնատուր լինելը կլինէր աւելորդ մեր նպատակի համար: Մահմետական իմաստունները բացի իրանց բազմաթիւ ասացուածներից, որոնցում կսորացնեն կնոջ, կտային և այսպիսի զործնական խորհուրդ տղամարդիկներին, հիմնուելով ի հարկէ: և Պուլանի վերայ, և կենսական փորձի և ա-

ւանդութեան.. « Եթէ կդանուիս ամենազժուարին զրութեան մէջ, կասեն տղամարդին արեելիան խրատիչները, և չըգիտես ի՞նչ անել, ժողովեր քո բարեկամներին, հիւրասիրիր նորանց, բացատրիր նոցա բոլոր զործն և ընթացիր ինչպէս նոքա քեզ խորհուրդ կտան: Եթէ բարեկամներ չունիս, խորհրդակցիր առաջին հանդիպողի հետ և կատարիր նորա խորհուրդը բայց եթէ այդ վայրկենում չկան քեզ մօտ ոչ բարեկամներ ոչ տղամարդիկ, որոնց հետ կտրողանայիր խորհրդակցել, այն ժամանակ հանգամանօրէն բացատրիր բոլորը քո կնոջը, խնդրիր նորա խորհուրդը, լսիր համբերութեամբ բոլորն, ինչ որ նա քեզ պիտի ասէ, և բոլորովին նորա ասածի հակառակն արա»:

Նյս կերպով կինն կերեկ մինչեւ անգամ իրեւ սկիզբն կատարելապէս հակառակ այն ամենին, ինչ որ բարի է, խոհեմ և սուրբ, նա տղամարդի հաճոյքի զոհն է և կհամարուի նորա իրական ըստացուածքի թւում: Երեւելքում հարըստութիւնն և տոհմական նշանաւորութիւնը կձանաչուի կանանցում փակուած կանանց թուով: Յունաստանն և Հռովմը — ներկայացուցիչներն հին քաղաքակրթութեան, որի մնացորդներից մինչեւ այժմ օգուտ կքաղէ լուսաւորեալ աշխարհն, կնոջ վերաբերութեամբ նոյնպէս անարդար կերեխն: Հին ազգերի կըրօնական և ազգային կեանքի առանձնայատիկութիւնն կերեկ և հասարակական կեանքի մէջ: Առաջին տեղը կըունէ այստեղ ոչ անձն, այլ տէրութիւնը: Աորանով արդէն նախապէս կսահմանուի կնոջ ձակատազիրն և զաստիաբակութիւնը:

Պետական կեանքում կինը, յայտնի կերեւի, չէ կանգնել և չէ կարող կանգնել տղամարդի հետ հաւասար. նա չէր համարում աղատ, լիազօր քաղաքացիների հետ. և մանուկների, մշակ դասի և ստրուկների հետ միասին կկազմեր ստորին ցեղ մի: Ախալ կլինէր կարծել, որ հին դասական (կլասիքական) աշխարհի հասարակապետութիւնների մեջ մարդկային աղատութիւնն ունէր իւր փառաւոր տեղը: Կար արդարեւ աղատութիւն, բայց աղատութիւն միայն ընտրած սակաւամասնութեան, — աղատութիւն, որ ձեռք կրերուէր և կտահպանուէր ահազին բազմամասնութեան ստորութեան և ստրկութեան զնով: Հեռացրած լինկով հասարակական բոլոր դործերից, շատ քիչ անգամ՝ տեսնելով իւր մարդին, որ բոլոր ժամանակն կանցուցանէր հրապարակում, յոյն կինը դատապարտուած էր փակուելու տանը առանձին մասում (ինէկէ): Առ, ինչպէս Քանինովոնն կասէ, պիտի նմանէր մայր - մեղուի, չպիտի զուրս զար առանից, պիտի վերահասու լինէր գերուհիներին և նոցա աշխատանքներին, պիտի կարգաւորած պահէր անտեսութիւնը, կերակրէր մանուկներին և լի:

Անձ, աւել և բու - ահա խորհրդանշանը կանացի առաքինութիւնների - լրակացութեան, անտեսութեան և հսկողութեան: Լինել մարդի բարեկամը կամ զրուցակիցը նա չէր կարող: Առ, նելիոս Նեպոտի ասելով «Յունաստանում կողը կիակեն ծածուկ սենեակներում. նա մի բան չէ տեսնում», բայց իւր ամենամօտ աղղականներից և երբէք ներկայ չէ զտնւում խնջոյքների», կանանց հա-

մար արդելուած էին և Ալիմպիական խաղերն, որոնք փառքի զինաւոր ասպարէզն էին Յոյնի համար և կետրոն աղզային միութեան բոլոր յոյն ցեղերի համար: Կանանց բարոյական ստորութիւնը Յունաստանում այն աստիճանի կհասնէր, որ մինչև անգամ հրապարակ կհանէին վաճառելու օրէնքով — սահմանուած զնով: Տարօրինակ և անհաւատալի գուցէ երեւ Յոյների այսպիսի յարաբերութիւնը դեպի կինը, Յոյների, որոնք ունեին մեծ ձաշակաղիտական զգացումն և միշտ ձրդտել են զեպի ներգաշնակ զարգացումն: Կանացի զողորիկ և չքնաղ տարրի պակասութիւնը չէր կարող զգալի չլինել այդպիսի ժողովրդի մեջ. և ահա, իբրև բաւարարութիւն այդ զգացման, Յունաստանում «Կերիլէսի ժամանակներից կերեւի մի առանձին զասակարգ կանանց, որոնք յայտնի էին հիտերաներ անունով: Բնութեամբ տաղանդաւոր, իւր զրութեամբ ստիպուած զեպի ինքնակրթութիւնը, գեղեցկատես, ուրախ և սրամիա հիտերան կզրաւէր Յոյնին: Աս աղատորէն մուտ կզործէր հասարակական կեանքի բոլոր շրջանների մեջ և ունէր նշանաւոր ազգեցութիւն: «Կերիլէսի նման պատմական նշանաւոր անունները կապուած են Կապաղիայի նման նշանաւոր հիտերաների անունների հետ: Վ. յսպէս չնայելով իւր ձնշուած և ստորացած զրութեանը կանացի տարրը երեւան կհանէ իրան այսպէս թէ այնպէս և իւր ոյժով ձեռք կրերէ իր նշանակութիւն: Վրեւէլքում այդ ձնշման արդիւնքը կլինին նենգաւորութիւն և խորամանկութիւն, որոնց օգնութեամբ տընարդել և հասարակական իրաւունքներից

զրկուած կինը շատ ամգամ իւր ձեռքն կառնու մարդի ղեկը: Յոյների մ.ջ կինը որպէս հիտերան, ձեռք կրերէ նշանաւոր ազգեցութիւն, բայց հանդէս զուրս գալով այդ ղերում, նա չէր ապահովում իր խկասէւ բարոյական նշանակութիւնն և անսասան բարօրութիւնը: Անսացի զեղեցկութիւնների և տաղանդների անշատումն կանոցի առաքինութիւններից, կնոջ մտաւոր զարգացմանը—նորա բարոյական վսեմութիւնից, անջատումն, որը կտեսնեն յոյն հիտերաների մ.ջ, կտար մի խիստ անբնական հետեւանք, որ յետոյ նոյն խակ Յոյների զգուանքին և երգիծաբանութեանն ենթարկուեցաւ:

Եյս կերպով, հիտերաների նշանակութիւնը չբարձրացը յոյն կնոջ նշանակութիւնն և նոցա իշխանութիւնն, որ հիմուած էր միակողմանի սկզբունքների վերայ, կեղծ էր և անյարատեւ: Փոքր ինչ տարրեր էր կնոջ դրութիւնը Ապարատ յում: Նիկուրդոսի տէրութիւնը աւելի կնմանէր զինուորական եղբայրութեան քան թէ քաղաքական հասարակութեան: Քոյր շահերը կկետրանանային արտաքին ֆիզիքական ոյժի այրութեան և ծարպիկութեան զարգացման վերայ: Համաձայն սորան և Ապարատուհին կիրթուի միևնոյն դաժան պայմանների ներքոյ: Խնչպէս սպարտացին, սպարտուհին ևս կը վարժուէր մարմնամարզութեան, ըմբշամարտութեան, վազելու և բռնամարտութեան մ.ջ: Խա չէր կարող ունենալ ո՞ւ և իցէ կանացի տնօնական շահեր: Խա պիտի հրաժարուէր իւր կանացիութիւնից և շանար լինել տղամարդի նման խոտաբարոյ: Եյսպէս սպարտացի կնոջ համե-

մատաբար ազատ զրութիւնն և նորա հաւասարութիւնը տղամարդի հետ կրգնուեր կանացի բնութեան յատկութիւններից հրաժարուելով: Եյսպիսի երեսոյթի մնմականութիւնը վաղ թէ ուշ պիտի ծնէր սպարտական կեանքի համար վնասազգեցիկ հետեւանքներ, այսպէս Երիստատէլը կյանդիմանէ սպարտացի կանաց անտահման ինքնատիմութեան, անժուժկալութեան և շռայլութեան համար: Նորա կարծիքով սպարտուհիներն իրեւ կանայք փշացան օրէնսդրութիւնից, ուստի և բնականաբար խանգարումն պատճառեցին հասարակական կեանքին, գործով չհաւասարելով տղատմարդին, այլ օգուտ քաղերով իրանց ազատութիւնից ի վնաս իրանց և իրանց մարդիկների: Զարմանալի է, որ հնութեան այդ մեծահամբաւ մտածողն կնոջ բնութեան և նշանակութեան վերայ ունեցած իւր սեպհական հայեացքով կհամնէր ծայրայեղութեան, որ վիրաւորական էր կանացի սեռի համար: Իւր ժամանակի և աղջի ընդհանուր նախառաջարմունքից վիր կանգնած լինելով, Երիստատէլ սաստիկ կղինուեր կամանցը սորուկների հետ համահաւասարելու դէմ: Եայց այսու ամենայնիւ նոցա բնութիւնն կընդունէր տղամարդի բնութիւնից շատ ցած և շատ վատթար: Խա կասէր որ, թէև կինը ունենայ կամք ևս, բայց այդ կամքն առանց իրաւունքի է, թէև կինը ընդունակ ևս լինի առաքինութեան, բայց այդ առաքինութիւնն երբէք չէ կարող հաւասարուել աղատ քաղաքացու առաքինութեանն և միայն մի փոքր բանով կտարբերուի այն առաքինութիւնից, որին ընդունակ է ստրուկը:

Հռովմում չկային արեելեան կանանց ներ և ստրկութիւնն, չկար և յունական կողջ անարգելութիւնը, բայց տաղտկալի հոգարարձութիւնը կծանրանար այստեղ կողջ վերայ նորա ամբողջ կեանքի ընթացքում։ Հռովմայեցին յարգելով կողջ միայն պետական նշանակութիւնը, որոշեց նորա զրութեան համար ամենախիստ իրաւաբանական կանոններ և սխմեց նորա անձի վերայ իր ծանր ձեռքը։ Երդին աղջկան նոյն խոկ ծնելու միջոցին հայրը կարող էր աքացելով հեռացնել և դուրս ձգել իրեւ ապօրինի ծնունդ։ Մինչեւ ամսւանութիւնն աղջեկը կիմար հօր լիազօր իշխանութեան ներքոյ։ Կամումութեան մէջ ևս նա կպահէր ստորագրեալ և միշտ հպատակեալ զրութիւնն, ինչպէս յառաջ հայրը, նոյնպէս այժմ մարդն իրաւունք ունէր սպանել նորան, տանից գուրս ձգել կամ ուրիշին յանձնել։

Ճշմարիտ է, Հռովմայեցիների, ինչպէս ուրիշ ժողովուրդների մէջ ընտանեկան կեանքի բարսյական սկզբունքների գլխաւոր նշան կերեի յարգանք զէպի կողջ անձնականութիւնն։ Հռոմում կինը ըստրուկ չէր համարւում, այլ մի էակն որ թէե համահաւասար չէր տղամարդին, բայց ունէր ուղղակի և ընդարձակ ազդեցութիւն ընտանեկան կեանքի ներքին կազմակերպութեան և հօգու վերայ, և մինչև խակ շատ անգամ հասարակական գործերի ընթացքի վերայ, կէիշենք, որ հին Հռոմում թափաւորական իշխանութիւնը կործանելու ամենամօտ առիթն, ըստ աւանդութեան, կողջ հասցրած անպատութիւնն էր, (Պօլատինոսի կողջ՝ Լուկրէցիային), որ տասնապեսների անկ-

ման պատճառը Վիրդինիայի — ստորին ծագումն ունեցող կողջ անարգութիւնն էր, որ Կօրիոլանոսի մայրը իւր որդու վերայ ունեցած աղղեցութեամբ ազատեց Հռոմումը Վօլսկերի գարհուրելի յարձակումից, որ Գրակքուներն իրանց քաղաքական վսեմ սիրազործութիւններով պարտական են իրանց մօր — Կօրնելիայի աղղեցութեանն և զաստիարակութեանն են։ Բայց վերջերում Հռոմում ամուսնութեան խիստ ձեւերը սկսան կորցնել իրանց պարտաւորիչ զրութիւնը, ամուսնութիւնը կորցրեց նախկին պետական և կրօնական նշանակութիւնը, և դարձաւ դատարկ ձեւապահութիւն։ Երեան եկան ամուսնութեան քակմունք, որոնք յայտնի չէին հռոմէական պատմութեան առաջին ժամանակում, նորա հետ միասին և կողջ արժանաւորութիւնը սկսաւ հետզհետէ աւելի ընկնել։ Վինը սկսաւ վայելել արտաքին ազատութիւն, որը յառաջ շռւնէր, բայց այդ արտաքին անկախութիւնը (Էմանցիպացիա) զարգացաւ ի վես նորա բարոյական արժանաւորութիւնների։ Ըստավ մուացուեցան այն ժամանակներն, երբ մանելն ու զործելը կհամարէին կողջ բարեմասնութիւններ։ Հռոմում սակաւ էին Լուկրէցիայի, Կօրնելիայի, Վիտուլիայի, Սզրիապինոյի և Պալատուրնիայի — Պլինիոսի կողջ նրամանները։ Եյս օրինակները ցոյց կուպին միայն, թէ Հռոմում կինը ինչ կարող էր լինել այն համեմատաբար բարեյաջող պայմանների մէջ, որոնցում նա կարգուած էր այնաել։ Հռոմում կողջ բոլոր ժամանակը, բոլոր ձգամունքը նուիրուած էին պատմումանին և զարդարանքին, առ-

մենայն միջոցներ դորձ կղնէր նա, որ աւելի զեղեցկութիւն տայ իրան և երկար պահպանէ այդ զեղեցկութիւնը, տանը ժամանակն ապարդիւն կորցնելով պաճուծանքի վերայ, և անփոյթ առնելով անտեսութիւնն ու մանուկների կը թութիւնն, մատրօնաները մնացած ժամանակ կզուարձանային ներկայ լինելով թատրում յունական անբարոյական կատակերգութիւններին կամ կիրկէսում հանդիսատես կընեին սուսերամարտիկների վայրենի տմարդի մենամարտութիւններին և կծափահարեին, երբ որ արիւնը վազելիս կերեւէր: Խւ այսպէս պՃնասիրութեան հետ միասին զարգացան հռոմէական կընոջ մէջ վայրենի, կենդանական կրքեր, ուրոնց պատկերները կներկայացնէ Տակիտէս: Ընառակ Վեսսալինայի, անագորոյն փոքր Սպիտակնիայի, խորամանկ Պօսպէս Աաբինայի և ուրիշների անուններն ընդհանրական դարձան յայտնի անսանձ կրքեր նշանակելու համար: Հուոմում վերջապէս կինը կորցրեց իւր բարոյական արժանաւորութեան վերջին մնացորդներն: Համարեա թէ բոլոր այն ժամանակի հռոմէացի հեղինակները տեսան կնոջ ստորանկման վերջին աստիճանը և նըկարագրեցին նոյնը իրանց զրուածներում:

Եյսպէս հին կռապաշտական աշխարհը կտակեց իրանից յետոյ կամ ստրկութիւն կնոջ, որ կիսէր նորանից մարդկային բոլոր իրաւունքները, կամ թէ ազատութիւն բարոյական եղծման ձեռով, որ կիրծանէ, կնոջ իսկական արժանաւորութիւնն և կոչնչացնէ, զէպի նա եղած որ և լոյն յարդանք:

Հին կնոջ բոլորովին տարբեր, ինքնազոյ տիպը կներկայացնէ, երբայական ազգը Նըկութիւնը պատրաստութիւն էր զէպի քրիստոնէութիւնն և նորա հետ սերտ կապ ունէր: Ա. զիրքը իւր առաջին էջերում՝ նկարազերով անմեղ մարդի նախափիզըն վիճակը ցոյց կտայ և կնոջ սկզբնական բարձր նշանակութիւնն և ընտանիկան յարաբերութիւնների մաքուր օրինակը: Յանցանքը բոլորովին կերպարանափոխեց նախեղակ վիճակը, որի հետեանք եղաւ մարդի համար խիստ մաքառումն բնութեան հետ. իսկ կնոջ համար մայրական ցաւեր և մարդին ստորագրութիւն: «Առ այր քո դարձ քո և նա տիրեսցէ քեզ» (Օ՞ննդ. Յ. 16.): «Պատմութիւնն, ինչպէս արդէն մասամբ տեսանք, կներկայացնէ, այդ վճռի տիսուր արդարացումն: Միեւնոյն վճռի ներդործութեան ներքոյ կտանուի և երբայցի կինը, թէ և նորա նշանակութիւնը Ա. զրքում միանգամայն այն չէ, ինչ որ արևելքի միւս մասերում և ընդհանրապէս հեթանոս աշխարհում: Բայ վարդապետութեան Ա. զրքից Աստուծոյ երեսից ընկած, իւր մեղանչանքի բոլոր հետեանքներին ևնթարկուած մարդը չզրկուեցաւ միւսանգամ կորցրած երջանկութիւնն ձեռք բերելու և կեանքի բարոյական ներդաշնակութիւնը վերականգնելու յոյսից: Նորան խոսացուեցաւ, թէ կինը, որ եղաւ նորա անկման պատճառ, ինքն առաջինը խարուելով օձից, պիտի լինի և նորա վերականգման պատճառը: «Զաւակ կնոջն ջախջախեսցէ զզուիս օձին» (Օ՞ննդ. Յ. 15.): Եյն միաքը թէ կինն եղաւ պատճառ անկման և մաշի, և կինն

պիտի քաւե իւր այդ մեղքը ծնկով ։ Եռ-
բան, որ պիտի ջախջախի, օձի զլուխը,
կտար բոլորովին առանձին բնաւորութիւն
հրէաների հայեացքին կնոջ վերայ և
այդ ժողովրդի մէջ ունեցած նորա զրու-
թեան վերայ։ Աշե մայրութիւնը և ու-
րիշ ազգերում շատ անգամ կտար կնոջը
նշանաւոր արտօնութիւններ, Նըկաների
մէջ զիխաւորապէս կինը կինահատուի այն
չափով, որչափ նա ընդունակ է, որզեծնու-
թեան որչափ նա շատածին է, այնչափ
շատ է և նորա պատիւն ու յարգանքը։
Քաղմակնութիւնն, այս հայեացքին նա-
յելով, թէ և ընդհանրապէս կնոջ ստո-
րացումն կլինի, բայց չէր կարօղ համա-
րուիլ պախարակելի դորձ։ Եւ յիրաւի
մէնք կտեսնենք, որ Վավիսական օրէնքնե-
րում բաղմակնութիւնն և մանաւանդ եր-
կակնութիւնն ոչ մի տեղ զրականապէս
արգելուած չէ, Քնդհակաւակն երկակնու-
թիւնը դեռ մի քանի զէպքերում կհա-
մարուի օրինական։ Քայց միենոյն ժամա-
նակ Նին կտակարանի մէջ ամեն տեղ
կարելի է նկատել մօր վասմ նշանակու-
թիւնն և խորին յարգանք զէպի նա. որ-
զիքների յարգանքը զէպի մայրը չափու-
իս ուրիշ լինի քան յարգանքը զէպի հայրը.
իսկ մօրը չյարգելը երբեմն նաև ծանր
չետեանքներ կունենար։ Ա. զբքում շատ
տեղ կարելի է ցոյց տալ, ուր կօրինաւ
զրուի յարգանք զէպի հայրն և մայրն
ուր մահ կտահմանուի չյարգելու համար,
միով բանիւ ուր հանգէս կրերուի ծնող-
ների՝ որզիքների համար ունեցած վսեմ
անմերժելի և տեսակ մի սրբազն նշանա-
կութիւնը։

Իսկ ամուսնական փոխադարձ յարա-
բերութիւնների մէջ հրէայ կինը միշտ
կերեի մարզին հպատակ զրութեան մէջ։
Կորա պարագն է հանգստացնել մար-
զին, աշխատել նորա համար, լինել ա-
մենայն ինչ նորա համար։ Կըբայական
բարոյախօններն, պահանջելով կնոջից
մարզի անդրբութեան համար զանազան
բարոյական յատկութիւններ, միևնույն
ժամանակ չեն սահմանում մարզի հա-
մար որ և իցէ պարտաւորութիւններ կնոջ
վերաբերութեամբ, յանձննելով կարծես
կնոջ բաղզը մարզի կամքին։ Կոցանում
ամենուրեկը հետեղզարար և խամիւ յա-
ռաջ կրերուի առաջին մեզանցող կնոջն
ուզգած սպառնալի վճռի միաքը և առ այր
քո զարձ քո և նա տիրեսցէ քեզ։ Ա. յս
ամենի հետ միասին երբայիցի կնոջ ար-
տաքին զրութիւնը բաւական ազատ էր,
ոչ այնպէս ինչպէս արեւելեան ուրիշ ազ-
գերում կամ Յունաստանում։ Նըկայ
կանայքն և ազգիները չեն ընկած միւս
արեւելեան կանանց անզործութեան, ծոյլ
անդրբութեան և պճնասիրութեան մէջ,
ամենազործունեայ աշխատանքները տան
և անտեսութեան մէջ և բոլոր ընտանիքի
անային բարեկեցութեան համար հարկա-
ւորուած վաստակները կհամարուէին նո-
ցա ուղղակի կոչումն։ Նորա կմանեին,
կկորեին և կզորձեին, հազուսաններ կպատ-
րաստեին, ջուր կիրեին, հաց կթիւեին,
օտարներին ասպնջականութիւն ցոյց կտա-
յին, կհոգային հօտերի մասին ևն։ Ապա-
տահեր, որ երբայիցի կինը հանդէս կզար
և հասարակական գործունեութեան մէջ,
մարզարէուհու արժանաւորութեամբ կամ
զատաւորների պաշտօնով ևն։ կանոյք

շատ անգամ կարտայայտելին իրանց մասնակցութիւնը հասարակական մեծամեծ պիտուածների դործին։ Նոքա երգերով և ուրախութեամբ ճանապարհ կձգէին յաղթական զօրքերին, կփառարանէին յաղթական ևն։ Արէաների աղջեկները կկրթուէին իրանց մօր մօտ հնազանդութեան և Խստուծոյ երկիւղի մէջ, նոցա կուսուցանէին զլխաւորապէս երգ, քնարահարութիւն և պար, յատկապէս նորա համար, որ նոքա աւելի նշանակութիւն և շքեղութիւն տային ժողովրդի կրօնական տօնախմբութիւններին։ Քայի զորանից աղջեկներին կհրահանգէին առանձին հոգատարութեամբ բոլոր տնօյին և կանացի աշխատանքների և ընդհանրապէս այն ամեն բանի մէջ, որ կվերաբերուէր կնոջ հոգսերին, թէ ընտանեկան կեանքի պահանջների և թէ հասարակական կիանքի շքեղութեան նկատմամբ։ Անգ կտեսնենք խրայէլեան կանանց մէջ կրօնական խորին զզացումն, որ կարօղ է ապացոյց լինել սիրոյ և անձնանութիրութեան վեհ հոգուն։ Վյապէս ուրեմն հրէայ կնոջ կեանքում մենք չենք զանում այն ճնշողութիւնն, որը շատ թէ քիչ յատկանիշն կերևի կնոջ հին աշխարհում ունեցած զրութեան մէջ։ Արէաների մէջ կտեսնենք, որ կինը համեմատաբար աւելի նշանակութիւն ունի ընտանիքում, թէև չենք տեսնում նորա մէջ կատարելապէս մարդկային իրաւունքներն և արժանաւորութիւններն։

Ա. Գ. Ս.

ՃԵՄԱՐԻՑԱ Ա. Զ. Գ. Ա. Ս. Ե. Ը. Ը.

Նատ մարդիկ կան, որոնք կցանկան ազգասէր կոչվել եւ սորա վերայ զարմանալու չենք. որովհեաեւ բարբարոսներն անգամ փոյժ եւ ջանք ունին աղգասէր կոչվելու. բայց միթէ կարող են. Ոչ երբէք. որովհեաեւ ազգասիրութիւնն եւո ունի իր համար այն ահագին եւ մեծ կրակն եւ այն վաեմ ու ծանր պարագաներն, որ ամեն մարդի գործը չէ նոցա վերայ պայծառու ճշմարիտ գաղափարներ կազմել, եւ թէ պարագաների հակառակութիւններին յաղթելով, նորա անթառամ պատկն իւր ճակատին վերայ հիւսել առ ի յիշատակ յաւիտենական գովետի։

Վայր ի վերոյ կարծիքներով, շահապիրական յոյսերով, անմիտ խորհուրդներով եւ լոկ միայն խօսքով ազգասէրներ շատ կան. բայց այսպիսիներն ազգասէրի ստուերն անգամ չեն կարօղ համարվել. այլ թէ բարօյապէս մի մի զարհուրելի ահեղ գաղանների կնմանեն, որոնց վախճանը շահապիրութիւնն եւ թեթեւամիտ փառասիրութիւնը լինելով արժանի չեն երբէք ազգասիրութեան անուն ժառանգել. Նոքա միայն կարօղ են ազգասէրի պարծանքն եւ փառքն ստանալ որոնք ազգասիրութեան բոլին մէջ եզած այն կրակից աւելի մեծ եւ ահագին կրակով վառված են, այսինքն ճշմարիտ եւ վեհանձն ազգասիրութեամբ, մաքուր եւ անշահասէր ազգասիրութեամբ, եւ